



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Կա՛նոնն արարողն  
Եզրս քաղաքս քան  
Եզրս քաղաքս քան

Յ. Մարտի





1884



1885

1886

1887

1888

1889



ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ԱՅՍՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՈՐ

Ի ՄԻՋԱԳԻՒՂ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

1858



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ



THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

530 SOUTH EAST ASIAN AVENUE

CHICAGO

ILLINOIS 60607

TEL: 773-936-3700

1888

UNIVERSITY OF CHICAGO



ԿԱՆՈՆԱԳՐԱԲԱՐՔԻՆ


ԱՂՔԱՏԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՈՐ

Ի ՄԻՋԱԳԻՒՂ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

1858



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆԻ ԲԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՓԱԶԵԱՆ

4217 42

7121

Handwritten text at the top of the page, likely a title or header, which is mostly illegible due to fading.

Main body of handwritten text in the upper half of the page, consisting of several lines of cursive script.

Handwritten number '13' on the right side of the page.



# ՅԱՄԱՋԱՐԱՆԱԹԻԹԻՒՆ

Այս վերջին ժամանակի բոլոր քաղաքագէտ մարդիկը անթիւ փորձերով իմացան թէ՛ երկիր մը ծաղկեցնելու, տէրութիւն մը զօրացնելու, աղղ մը սլայծառացնելու, ժողովուրդ մը երջանկացնելու, աղքատ մը բարի վիճակի մէջ պահելու միջոցներ՝ մի միայն հաստատ եւ բարեկարգ ընկերութեանց օգուտներն են :

Եւ յիրաւի է այս բանը, որովհետեւ ո՞ր երկրին, ո՞ր տէրութեան եւ ո՞ր աղղի մէջն որ այս շահաւէտ գործը գեա իր հաստատութիւնը չի գտաւ, այն երկիրը փշալից եւ ապառաժ, տէրութիւնը տկար, աղղը խաւարեալ, նոյն տեղաց ժողովուրդը ապերջանիկ, եւ ստորին մարդիկը անարդեալ ու խեղճ վիճակի մը մէջ են :

Անոր փոխարէն այն երկիրը որ կը տեսնե՞նք ծաղկեալ՝ ընկերութեանց արդիւնքն է, տէրութիւն մը կը լըսենք զօրացա՞ծ՝ անոր լոյսովն է, ժողովուրդ մը երջանկացած՝ անոնց պատճառովն է, աղքատը լաւ վիճակի մէջ գրո՞ւած՝ նոյնպէս ընկերութեանց խնամքովն է :

Վերջապէս այս օրուան օրս էն բարձր աստիճանի մարդոցմէ սկսեալ՝ մինչեւ ստորին մարդը իր յոյսը ընկերութեանց օգտին վրայ դրած, իրենց ներկայ եւ ապագայ վիճակին բարելաւութիւնը անոնց զօրաւոր օգնութիւններէ կ'սպասեն :

Ի՞նչ բանի կը ծառայէ այն հողը կամ երկիրը՝ երբոր բարիք մը չէլնէ, ի՞նչպէս կրնան պարծենալ այն տէրութիւնները՝ երբոր տկար են, ի՞նչ կերպով կրնան յառաջանալ այն աղղերը՝ երբոր խաւար տգիտութեան մէջ կը տապալին, ո՞րպիսի ճամբով կը դառնեն իրենց երջանկութիւնը այն ժողովուրդները՝ երբոր մարդկային օրէնքները ստից տակ կը ճմլուին, ի՞նչպէս կարող ըլլան իրենց վիճակը լաւցնելու այն աղքատները՝ երբոր իրենցմէ վեր աստիճանի մարդոցմէ անարդեալ եւ արհամարեալ են . . . :

Ահա ասոնց առաջքը առնուելու, եւ զանոնք ուղիղ ընթացքի մը մէջ դրուելու զօրաւոր դէնք եւ օգտակար դէղ՝ զանազան ընկերութիւններ հնարուած են :

Թող խօսին հրապարակաւ եւ երկարօրէն ընկերու-

Քայց ի՞նչու այնչափ հեռու տեղերէն սպասենք ասոնց վկայութիւն, թող խօսի Տաճկաստան քիչ ժամանակի մէջ ընկերութեանց կողմէն տեսած օգուտներուն վրայ . ձայնէն անոր ելեքարական թելերը, հնչէն թող Չմիւսնիոյ շոքեկառքերը, գոչեն «Շիրքէթի Խայրի յէ» անուն ընկերութեան նաւերը, եւ այլն եւ այլն :

Ափսոս դեռ եւս բազում ընկերութեանց անուաններ պիտի լսուեր, եւ անոնցմէ առ հասարակ մեծամեծ օգուտներ պիտի տեսնուէր, թէ որ ընդհանուր հասարակութիւնը անոնց յարգը ճանչնար, պատուէր եւ ջանար ինչպէս յառաջատես անձինք ճանչցան, յարգեցին, եւ իրենց ստացուածքէն փոքր ինչ բան մը զոհելով այս օրուան օրս օգուտները վայելեցին եւ յաւիտեան պիտի վայելէն :

Եւ ահա այս ճշմարիտ ճանաչումներ որ մեզ ալ յորդորեց ու պարտաւորեց մեր կարողութեանը համեմատ փոքրիկ ընկերութիւն մը կազմել, եւ անկէ ազգիս Հայոց ազքատ մասին նպատակ օգուտներ քաղել :

Ի՞նչպէս շատերուն յայտնի է Եւրոպիոյ մէջ կերպ կերպ երեւելի ընկերութիւններ կան, եւ անոնցմէ ոմանց նրպատակն է երկիրը բարեկարգելու, ոմանց վաճառականութիւնը ընդարձակելու, ոմանց գիտութիւնը ծաղկեցրնելու, եւ ոմանց ալ նորանոր գումուներ հնարելու եւ այլն եւ այլն եւ այլն :

Ասոնց մէջ այնպիսի ընկերութիւններ ալ կան որ՝ ամենօրեայ ջնջին տուրքով մը մեծամեծ գործեր կը տեսնեն, ինչպէս են Ամերիկայի «Պորտ» ընկերութիւնը, Հռոմայու Աեոնի «Տարածման» ընկերութիւնը, Գաղիոյ «Գթութեան Գորք» ըսուած միտրանութեան ընկերութիւնը, Անգղիոյ «Գանձարան Խնայութեան» կոչուած եղբայրութիւնը եւ այլք :

Ասոնք ժամանակին ընդհանուր հասարակութենէ փոքրը ինչ նուէրքներ պահանջելով սկսեր՝ եւ այս օրուան օրս այնպիսի վիճակի մը հասեր են որ՝ իրենց ունեցած հարստութեամբը կրնան մինչեւ անգամ ընդարձակ երկիրներ գնել եւ մեծամեծ քաղաքներ շինել . . . :

Ահա այս բարեյաջող ընկերութեանց մեջէն «Գանձարան Խնայութեան» կոչուածը մեր նպատակին յարմար դատելով նոյն կերպով ընկերութիւն մը կազմելու փափագեցանք :

Ինչպէս վերը յիշուեցաւ, այս ընկերութեան նպատակը Լուսաւորչական Հայոց ազքատ մասին առաւել աւաղայ վիճակին բարելաւութեանը կերպով մը օգնել է . անոր համար ընկերութեան անունը «Ազքատա՛հրաց Ըն-

որ առաջ կրնայ հասցընել այն Գանձարանները մեր նպատակին, երբոր ընդհանուր հասարակութիւնը իր կողմէն թեթեւ ձեռնառուութեամբը ամէնօրեայ անոնց օգնէ:

Եւ յիրաւի՝ ո եւ իցէ աստիճանի մէկը Ընկերութեան կանոնները ուշադրութեամբ աչքէ անցուցած ժամանակը, անոր բուն նպատակը, ինչ կերպ ընթացք ունենալը, եւ խնայութեան Գանձարանին ըլլալու օգնութիւնները որչափ թեթեւ կերպիւ ըլլալը ակննելով, հարկաւ պիտի դափէ ընկերութիւնը, պիտի քաջալերէ անոր հիմնադիրները, եւ իր կողմէն բարեսիրական ջանիւքը պիտի աշխատի անոր ձեռնառուութեամբ օգնելու, եւ ուրիշներն ալ այսպիսի բարեգործութեան մը յորդորելու:

Ուստի կը խնդրեմք ձեզմէ՝ ո՛ ընդհանուր աղգայինք, ձեր ազգասիրական եռանդիւքը, աղքատասէր բնաւորութեամբը, ձեր բարերար կամքէն կախեալ ամէնօրեայ թեթեւ նուէրներովը լեցուցէք Գանձարանները, գորացուցէք Ընկերութիւնը, քաջալերեցէք անոր անդամները, յորդորեցէք ձեր Քրիստոնեայ Հայ եզրայրները ատոր յառաջագիմութեանը օգնելու, որպէս զի Ընկերութիւնը իւր նպատակին հասնելով պատճառ ըլլաք բազում վշտացեալ խեղճ Հայ ընտանեաց ապագայ երջանկութեանը:

Իսկ ընդհակառակն չըլլայ որ մէկը անիրաւութեամբ կամ ազիտարար Ընկերութիւնը պահարակէ, անդամները բաժնասէ, եւ անոր ընթացքը անարգէ, գիտցած ըլլան այնպիսիները որ՝ նախ զիրենք կը վնասեն, յետոյ պատճառ կ'ըլլան կամ գործը դժարցնելուն, եւ կամ Ընկերութեան բոյրութիւն լուծուելուն, ու անով աղգին աղքատացը մեծ վնաս մը հասցընելուն:

Խօսքերնուս վերջը կը պարտաւորիմք նաեւ ըսելու թէ՛ որովհետեւ Ընկերութեան կերպը գործ ողորմութեան կը համարի, երբոր մէկը աս Գանձարաններուն օգնութիւնը բաժն ժամանակը՝ Աստուածային երանութեանն ալ արժանի պիտի ըլլայ, ըստ այնմ՝ «Երանի ողորմածաց՝ զի նոքա ողորմութիւն գացեն»:

Գարձեալ մէկը խնայութեան Գանձարանին մէջ որ ըսել է ( գանձանակ ), չունեցածէն անգամ երկու լումայ որ է Ժանդըր նեաած ասենը պիտի յիշէ մեր Փրկչին Յիսուսի այս խօսքը, թէ՛ «Ամէն ասեմ ձեզ զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ՚ի գանձանակն»:

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Ք

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ԱՂՔԱՏԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՒԱԾ Ա

ԿԱՆՈՆՔ

1. Այս «Աղքատասիրաց Նկերութիւն» անուանեալը առ այժմ Ձկ անդամ, բաղկացեալ Նկերութիւն մը պիտի ըլլայ, որոնց վեցը Պաշտօնատէր, վեցը Վորձակալ, և տասներկուքը Վանձապահ պիտի անուանին:

2. Այս անդամները պիտի ըլլան իրօք եղբայրասէր, աշխատասէր, անձնանուէր, և բարի համբաւ ստացող անձինք. և իրենց մէջ կատարեալ Աէր, հաւասարութիւն, մի և նոյն արտօնութիւն, և մէկ իշխանութիւն հաստատելով. մի սիրտ և մի հոգի եղած՝ ՚ի փառս Աստուծոյ և ՚ի սէր աղքատին՝ առանց վհատելու պիտի ջանան իրենց բարի նպատակին հասնելու:

3. Նկերութեան անդամ ըլլալու փափագող անձը պիտի պարտաւորի նախ հաւատարմութեան երդում ընելու, անոր ներքին և արտաքին կանոններուն հպատակելու, և իրեն յանձնուած պաշտօնը երկու տարի միակերպ սիրով և ամենայն յօժարութեամբ կատարելու. և այս պարտաւորութիւնները ճշդիւ և հաճութեամբ ընդունելուն ստորագրութիւն մը տալու:

ՀԱՏՈՒԱԾ Բ

4. Աղքատասիրաց Նկերութեան բուն նր...

ներ, այսինքն Մայրաքաղաքիս մէջ օդատարած տեղ մը բաւական ընդարձակութեամբ երկու դպրոց կանգնելով, անոնց (արու և էգ) զաւակունքը ձրիաբար կրթել, և ամենայն առաքինութեամբ, ուսմամբ, և արհեստիւ զարգացնել:

5. Նկերութեան առաջին հոգը պիտի ըլլայ՝ յիշեալ երկու դպրոցաց տարեկան ծախքին համար առաջուրնէ հաստատ և անշարժ եկամուտներ կարգել, այն կերպով որ՝ զանոնք ստացած օրերնէն կարենան անգործ, խեղճ, և օրական հացի կարօտ եղածներէն ոմանք անոնց մէջ ծառայեցնելու:

ՀԱՏՈՒԱԾ Գ

6. Նկերութիւնը իւր այս մեծ և դժար՝ բայց միանգամ ազդին աղքատ մասին խիստ օգտակար ըլլալու նպատակին հասնելու համար դիւրին միջոց մը ընտրած է, որ է «Վանձարան խնայութեան» անուամբ սնտուկներ տարածել բոլոր Հայքնակ տեղերը, որոնց վրայ նոյն անունը տրպագրուած, Նկերութեան կնքովը և Պաշտօնատեարց ստորագրութեամբը վաւերացեալ պիտի ըլլան:

7. Յիշեալ սնտուկներուն Մայրաքաղաքիս մէջ ամեն կողմ ջրուելուն և անոնց հաստատ տեղեր որոշելու մասին Նկերութեան Պաշտօնատէրները՝ ըստ ժամանակին և ըստ պարագային պատուաւոր ձեռնարկութիւններով պիտի խորհին, և այնպէս լրագրերու միջոցաւ և կամ մասնաւոր յայտարարով մը պիտի ծանուցանեն բոլոր հասարակութեան:

ՀԱՏՈՒԱԾ Դ

և յօժար կատօք պիտի ըլլայ, բայց ընդ հանուրին ծանրութիւն մը չըլլալու և ամէն ատօմիձանի անձինք այս բարեգործութեան մասնակից ընելու դիտմամբ, յիշեալ Վանձարանները պատրաստ պիտի ըլլան հանապաղօրեայ մինչև հինգ կամ տասը փարան սիրով ընդունելու :

9 . Ընկերութիւնը իւր նպատակին շուտ հասցընելուն համար, աղքատասէրք ոմանք Ընկերութենէ մէյ մէկ փոքր Խնայութեան Վանձարաններ պահանջելով (որոնցմէ պատրաստ պիտի դրանուին), իրենց տանը մէջ, և կամ դործերնուն տեղը աւանձին տեղ մը դրած՝ կրնան ամէն օր իրենց կարողութեանը համեմատ փոքր ինչ բան մը անոնց մէջ ձգելու, և ամիսը անդամ մը Ընկերութեան Վործակալաց և կամ Վանձապահներու ձեռքը յանձնելու :

10 . Ընկերութիւնը նաև յանձն պիտի առնու կամաւոր ամուսկան մը ընդունելու անոնցմէ՝ որոնք կը փափաքին Խնայութեան Վանձարանին ամենօրեայ օգնելու՝ սակայն դժուարութիւններ ունին, անոնց համար Ընկերութիւնը մասնաւոր ստորագրութիւն մը պիտի հանէ, որուն մէջ այն բարերար անձինքը իրենց անունը մականունը, տեղը և խոստացած նուէրը պիտի ստորագրեն, և այնպէս ամսէ ամիս Ընկերութեան Վործակալաց կամ Վանձապահներու ձեռքը յանձնեն, փոխանակագիր մը ընդունելով :

#### ՀԱՏՈՒԸԾ Ե

11 . Խնայութեան Վանձարանին սնուկները ամիսը անդամ մը պիտի բացուին երկու պատուաւոր և Մղգածանօթ աշխարհական և մէկ Մ



Յարգոյ անձինքները նոյն ատեն Մնկերութեան Պաշտօնատէրներու հետ միաբան պիտի խորհին սնտուկներէ և այլ ուրիշ բաներէ հաւարուած ստակներուն ինչ կերպիւ գործածուելուն վրայ :

12 . Մ. յս երեք անձանց ընտրութիւնը պիտի ըլլան կարգաւ . Մայրաքաղաքիս մէջ բնակեալ Հայոց բազմամարդ թաղերէն՝ սա կերպով . այսինքն՝ ամէն անգամուն երբ որ սնտուկները պիտի բացուին , ութ օր առաջ անդամները մասնաւոր ժողովք մը ընելով՝ նոյն Հայաբնակ թաղերէն մէկուն մէջէն չորս աշխարհականի և երկու Ակնդեցականի վրայ քուէ պիտի նետեն , և անոր առաւելութեամբը պիտի որոշուին յիշեալ երեք պատուաւոր անձինքը :

### ՀԱՏՈՒԱԾ 2

13 . Մնկերութիւնը իւր նպատակին չի հասած որչափ կարելի է պիտի զգուշանայ՝ ո և իցէ կերպիւ ըրած և ընելիք տնօրէնութիւնները հրապարակաւ դուրս չի հանելու . բայց տարին անգամ մը ընդհանուր ժողով մը կազմելով պիտի հրաւիրեն հարկաւոր դատուած անձինքը , և հոնտեղ պիտի պարտաւորին Մնկերութեան Պաշտօնատէրերը , տարուանս մէջ ամփոփուած թէ ստրկին դումարը և թէ եղած տնօրէնութիւնները անոնց յայտնելու :

14 . Հրաւիրեալները ժողովատեղէն դուրս չելած պիտի պարտաւորին՝ Մնկերութեան գործերը առ ժամանակ իրենց մէջ գաղտնի պահելու խոստմունքներ ընել . և եթէ նոյն ատեն ՚ի նպատակ Մնկերութեան նպատակին իրենց կողմէն առա-

ՀԱՏՈՒԱԾ Է

15 . Ընկերութեան սահմանափակումը պիտի ըլլայ Միջազգիւղիս մէջ, և առ այժմ ժողովաւորութեան է Արծաւնութեան (Թ)անգարանի սենեակը . ուրտեղ ամէն օր Պաշտօնատէր մը և կամ Վարձակալ մը անպատճառ պիտի գտնուի, և շարաթը անգամ մը Արիակի կամ Սերբաթ օրերը բոլոր անգամները հոն ժողովելով՝ Ընկերութեան հարկաւոր եղած բաներու վրայ պիտի խորհրդակցին :

16 . Աթէ աղքատասէր մէկը կը փափաքի Խնայութեան Վանձարանին արտաքոյ կարգի նուէր մը ընել, հարկ է որ սոյն օրերը յիշեալ ժողովաւորութեան Ընկերութեան Պաշտօնատէրներու ձեռքը ուղարկեն հանդերձ նամակագրութեամբ մը, և անոնցմէ պատասխաններն ընդունին :

ՀԱՏՈՒԱԾ Ը

17 . Ինչպէս վեցերորդ հատուածին մէջ ըսուեցաւ . Ընկերութիւնը իւր ըրած տնօրէնութիւնները գուրս չի հանելուն համար, անգամները իրենց մէջ ներքին կանոնադրութիւն մը պիտի գրի առնեն, և զայն երգմամբ պիտի հաստատեն, որով ամէն գործերնուն մէջ նոյն կանոններուն հնազանդելով՝ անոր համեմատ պիտի վարուին :

18 . Աթէ անգամոց մէջէն մէկը նոյն կանոններուն հակառակ ինքնահաւան գործ մը տեսնէ, միւս ընկերները առաջին անգամուն սիրով և ճշ

ցումբենէ պիտի հեռացնեն, տեղը ուրիշ մը ընտ-  
րելով:

ՀԱՏՈՒԱԾ Թ

19 . Նկերութիւնը իւր այս բարենպասակ  
գործոյն հասնելու կարողանալուն պէս, երեսունը  
մեց հոգիէ բաղկացեալ ժողով մը պիտի կազմէ,  
(որ հրաւիրեալները պիտի ըլլան բոլոր Հայաբնակ  
տեղերէն.) և հոն խոհեմաբար պիտի խորհրդակ-  
ցին թէ կառուցուելիք դպրատանց շէնքին վրայ, և  
թէ անոնց հաստատ կարգադրութեանցը համար:

Այս ժողովքը քանի մը անգամ կրնայ դու-  
մարուիլ:

20 . Աթէ ժողովներուն մէջ հակառակու-  
թիւններ ելնէ, և կամ կարծեաց անհամաձայնու-  
թիւններ տարածուին, Նկերութեան Պաշտօնա-  
տէրները անմիջապէս ժողովականները քուէար-  
կութեան պիտի հրաւիրեն, և այնպէս քուէից ա-  
ռաւելութեամբ պիտի որոշուին այնպիսի խնդիրնե-  
րը:

ՀԱՏՈՒԱԾ Ժ

21 . Նկերութիւնը իւր նպատակին չի հա-  
սած թէ որ հարկաւորի անդամոց կողմէն (կամ  
ստիպեալ և կամ յայտնի պատճառաւ մը) լուծուե-  
լու, որ անկարելի բան մի է, այն ատեն իւր ու-  
նեցած բոլոր ստացուածքը նոյնպէս աղքատաց օգ-  
տին ուրիշ գործերու պիտի նուիրեն մասնաւոր  
ժողովով մը, եթէ ոչ քանի որ Նկերութիւնը իր  
կենդանութիւնը կ'ունենայ՝ մէկը կարող պիտի  
կենտրոն անգամ մնաս մը

մանակին պիտի վայելէն այն անտէր և աղքատ  
ժառանգները :

ՅԱՒԵԼՈՒԱԾ

22 . Այսպիսի Աստուածաճառոյ և աղագոյն  
գործ մը ամէն վտանգէ պահպանուելուն համար ,  
Անկերութիւնը իրեն յատուկ և գլխաւոր Պաշտ-  
պան մը պիտի ունենայ , որ պիտի ըլլայ Աղգասէր ,  
աղքատասէր և առաքինի Անձ մը : Այս յար-  
գապատիւ Անձը (որչափ կարելի է) Անկերութիւնը  
իւր հովանաւորութեանը ներքեւ առած՝ ամէն ա-  
տեն զայն պիտի պաշտպանէ , և Խնայութեան  
Գանձարաններուն բանալիները իւր քովը պիտի  
պահպանուի :

Վ Ե Ր Զ

Գրեցաւ կանոնադրութիւնս այս  
Յամի Տեառն 1858









41 9

42 17